

Հուշեր Չարենցի մասին

Իմ կյանքը շատ ու շատ բանով թերի կլիներ, եթե չհանդիպեի Չարենցին, չլինեի նրան մտերիմ և, որ ամենահիմնականն է՝ ոչնչացումից չփրկեի բանաստեղծի 1936-37 թթ. գրած և իր կողմից նամակ-հանձնարարականով ինձ վստահված անտիպների զգալի մասը: Չարենցի ձեռագրերի պահպանումը իմ ամենանվիրական ծառայությունն էմ համարում հայ ժողովրդին:

Ռ. Ղազարյան

Չարենցի հետ ծանոթացել եմ 1930 թվականի ամռանը, երբ ես տասնհինգ տարեկան էի և, ավարտած լինելով յոթնամյա դպրոցը, լիովին նվիրվել էի հեծանվային սպորտին ու պատրաստվում էի մասնակցել առաջիկա մրցություններին: Միաժամանակ գրում էի ոտանավորներ և երբեմն ցույց տալիս արդեն ճանաչված գրողների՝ այդպիսով ձեռք բերելով նրանց ծանոթությունը:

Հենց այդ ամռան մի գեղեցիկ օր, հեծանվային մարզումներից հոգնած՝ մտա «Ինտուրիստ» (այժմ՝ «Երևան») հյուրանոցի գով սրահը՝ փոքր-ինչ հանգստանալու, ուր և հանդիպեցի մի շարք ծանոթ գրողների, այդ թվում՝ բանաստեղծ Գուրգեն Մահարուն:

Չանցած մի քանի րոպե՝ նկատեցի հյուրանոցի երկրորդ հարկից իջնող ձեռնափայտը ձեռքին մի փոքրամարմին մարդու: Իմ բոլոր գրուցակիցները մեկեն շրջապատեցին ինձ անձանթ, բայց հասկանալի ուժով իմ ուշադրությունն իր վրա գամած մարդուն և աշխույժ գրույցի բռնվեցին նրա հետ:

Մեկ առ մեկ բոլորին շտապ հայացքով աչքի անցկացնելուց հետո նա հարցրեց, թե ո՞վ է այս սպորտսմեն փոքրիկը՝ գննելով ինձ ոտքից գուլիս: Չգիտեմ՝ ինչով արժանացա նրա համակրանքին. արդյոք հեծանվավազքի համար հատուկ պատվիրած գուլֆ համազգե՞ստս կամ սպորտային կեցվածքս դուր եկավ նրան, բայց նա հանդիսավոր վեր բարձրացրեց ձեռքը և առանձնահատուկ շեշտով գոչեց. «Էֆֆերի՜մ»:

Այդ ժամանակ Գուրգեն Մահարին բռնելով ձեռքս առաջ տարավ և ներկայացրեց ինձ՝ նուրբ խոսքերով շոյելով մանուկ ինքնասիրությունս: Միայն ՉԱՐԵՆՑ քառը լսելուց հետո զգացի, թե ինչ մեծ բախտ է վիճակվել ինձ ԱՆՉՆԱՊԵՍ ծանոթ լինելու այն մարդուն, որի մասին արդեն շատ անգամ էի լսել թե՛ դպրոցում և թե՛ հարազատներիս միջավայրում:

Բախտի բերմամբ ես գրավեցի Չարենցի ուշադրությունը, և նա մեծ հետաքրքրությամբ սկսեց հարց ու փորձ անել զբաղմունքիս բնույթի, ծնողներիս, մտադրություններիս, նույնիսկ հեծանվիս մասին:

Նրան անչափ հետաքրքրեց, որ ծնողներս եղել են գիտական մտավորականության այն ներկայացուցիչներից, որոնք արտասահմանում բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադարձել են հայրենիք և իրենց գիտելիքները ի սպաս դրել հայ ժողովրդին:

Չարենցի պահանջով հաջորդ օրը իր տուն տարա ծնողներիս լուսանկարը. երկար նայելուց հետո ասաց, որ այն կմնա իր մոտ և դրեց իր գրասեղանի արկղը: Այդ օրն էլ տոհմաձառի շուրջ վարած գրույցի ժամանակ ուշադիր լսելով տատիս՝ Շամիրամ Խորասանյանի հետ

կապված դրվագը, Չարենցը պոռթկուն ուրախություն ապրեց՝ ռուսական արքունիքում հայկական տարազի տարած հաղթանակի համար, բանն այն էր, որ ազգային համազգեստով ողջ Եվրոպան շրջած Շամիրամ տատա, անհրաժեշտության մղումով, ցարական բանակում ծառայող սեփական որդու (իմ մորեղբոր) հետագա բախտի տնօրինման հետ կապված որոշ կնճռոտ հարցեր պարզելու համար, ստիպված է լինում անհապաղ, սույլ թարգմանիչների ուղեկցությամբ մեկնել Պետերբուրգ և որոշ ջանքեր թափելուց հետո արժանանալ Նիկոլայ Երկրորդի մոր՝ կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի ընդունելությանը: Թագավորական պալատում ընդունելության ժամանակ, երբ հերթը հասնում է տատիս, կայսրուհին ուշադիր դիտելով նրա յուրահատուկ զգեստը և հարցման եղանակով ճշգրտելով հագուստի ազգային ծագումը, ընդհուպ մոտենում և շոշափում է այն:

Տատա անմիջապես խնդրում է թարգմանիչներին՝ հաղորդել կայսրուհուն, որ նա կստանա իր հավանած տարազը՝ որպես նվեր:

Իրեն ուղեկցողների փութաջանությամբ իմանալով թագուհու չափսը և իր՝ այդ այցի դրական արդյունքից գերերջանիկ վերադառնալով Երևան, նա հատուկ սուրհանդակով, որպես նվեր, կայսրուհուն է ուղարկում իր խոստացած հայկական մեծատոհմիկ շքեղաշուք համազգեստը՝ ճակատակալի վրա ամրացրած երկու խոշոր ադամանոյա քորոց: Շարունակելով սրահում նախորդ օրվա հանդիպման ժամանակ սկսած զրույցը, կասեմ միայն, որ Չարենցը այդ օրվա խոսակցության ողջ ընթացքում այնքան էլ չխրախուսելով Ռեզինա՝ իմ ոչ այնքան խրոխտ անունը, իր մեծ ու խորունկ աչքերով ինձ մի շտապ շեղ հայացքով նայելուց հետո բոլորի մոտ հայտարարեց, որ ինքը այսուհետ ինձ Ռուլան է կոչելու, և որ ես իր փոքր ու մտերիմ բարեկամը լինեմ:

Այդպես էլ եղավ: Նրա՝ այդ կտրուկ կողմնորոշումը լիովին իրականություն դարձավ և որոշ ընդմիջումով շարունակվեց ընդհուպ մինչև նրա ողբերգական վախճանը:

Սրահի մեր այդ խոսակցությունից անմիջապես հետո Չարենցը մեծ աշխուժով բոլորին, այդ թվում ինձ, հրավիրեց իր սենյակը՝ սուրճ խմելու (նա ապրում էր հյուրանոցի երկրորդ հարկում):

Անսահման էր նրա բնակարանում լինելու իմ ուրախությունը: Այսօրվա պես հիշում եմ. պատից կախված ճապոնական մեծաճաշակ ոսկեզօծ պաննոյի կողքին, պատվանդանների և պահարանների վրա դրված էին եգիպտական և հնդկական արձաններ ու արձանիկներ. պատերին կախված կային մի շարք նկարներ, որոնցից տպավորվել են Դանթեի կիսադեմ նկարը և իր հանգուցյալ սիրելի կնոջ՝ Արփենիկի դիմանկարը:

Հիշողությանս մեջ առանձնապես մնացել է Լենինի փոքրիկ գունավոր դիմանկարը, որը առանձին խնամքով կախված էր գրասեղանի մոտ՝ անմիջապես իր կողքին:

Նրան շրջապատող իրերը, որոնց մեծ մասը գրքեր էին՝ տեղավորված պատերի երկայնքով ու բարձրությամբ, պերճախոս վկաներն էին նրա անգուգական ու նրբագեղ ճաշակի:

Ես ուղղակի շլացած էի այդ ամենով, ինչ առաջին անգամ էի տեսնում այդտեղ:

Հապա ի՞նքը՝ Չարենցը...

Երբեք չեմ մոռանա իմ կյանքի այդ նշանավոր օրը, երբ նա, հյուրանոցի ճաշարանի մատուցողին սուրճ և մրգեր պատվիրելուց հետո, արևելյան ճաշակով տնային մի երկար ու լայն վերնազգեստ զգեց վրան (նախապես հանելով վերնաշապիկը), ծալապատիկ նստեց իր սիրած փափուկ թախտին ու թագբեռը խաղացնելով ձեռքերում՝ սկսեց մեծ ոգևորությամբ զրուցել:

Աստված իմ, այդպիսի ձեռքեր...

Ձեռքերի ավերը նուրբ վարդագույն էին ու ձեռքի երեսից եզրագծված կարծես քանոնով: Մատները երկար էին ու ծայրերին ունեին թեթև բարձիկներ: Ձեռքերը նուրբ էին, բայց առնական, մի հազվադեպ գեղեցկություն. յուրաքանչյուր հռչակավոր դաշնակահար, կարծում եմ, կերպեր ունենալ Չարենցի ձեռքերը:

Հուշագրական ժամանակագրության որոշակի խախտումով ասեմ, որ Չարենցը հետագայում ինձ երբեմն հարցրել է, թե արդյոք տգեղ է ինքը: Կար միայն մեկ պատասխան, որ ինքը գեղեցիկ է. և դա ասում էի խորը համոզումով: Եվ, իրոք, չնայած փոքր հասակին, Չարենցը ուներ շատ համաչափ կազմվածք և իր ներքինն ամփոփող արտահայտիչ ու ազնվաշուք կեցվածք: Հապա աչքեր... խոսելիս լինել, թե պարզապես նայելիս, նա կարողանում էր դիմացինին գերել, ենթարկել իրեն:

Դժբախտաբար, ես ամեննին չեմ հիշում, թե ինչի մասին էր այդ առաջին օրվա զրույցը, այն աստիճան թոված էի նրանով, այդ նյութական, շոշափելի մոտիկությունից և թարմ, առաջին անգամ ինձ ներկայացող տպավորություններից: Որոշակի հիշում եմ միայն, որ ժխորի հասնող աշխուժություն էր սենյակում, իսկ ամենից աղմկոտը՝ ինքը տան տերը:

Այդ օրվանից Չարենցը դարձավ իմ կուռքը, իմ անկաշառ պաշտամունքը, և, մոռանալով ամեն ինչ ու ամենքին, օր չէր անցնում, որ չայցելեի, նրա ուղեկիցը չլինեի տարբեր հրավերների և զբոսաշրջումների ժամանակ:

Ինչպես ասացի, ես այդ ամառ պատրաստվում էի մասնակցել հեծանվային մրցույթների և հաճախ էի մարզվում, բայց չունենալով սեփական հեծանիվ, վերցնում էի ապառիկ:

Չարենցը խրախուսում էր սպորտն առահասարակ, իսկ իմ ընտրած սպորտի այդ ձևը՝ մասնավորապես: Մի օր, մարզումներից հետո եկա Չարենցի մոտ՝ հաղորդելու իմ հաջողությունները, նա մեծ հանդիսավորությամբ նստեց թախտին և ասաց, որ մոտենամ սենյակի անկյունում կախված վարագույրին և բարձրացնեմ այն տեսնելու, թե ինչ է սպասվում ինձ: Չհասկանալով այդ հանդիսավորության պատճառը, մի քիչ էլ վախով, մոտեցա և, երբ բացեցի վարագույրը, աչքերիս չհավատացի. Պատին հենված էր գերմանական «Դուքս» մակնիշի մի չքնաղ վազբահեծանիվ՝ կարմիր ու դեղին ձողիկներով: Ապշահար՝ նայեցի Չարենցի կողմը և տեսա այնպիսի մի գոհունակ ժպիտ, որից ուղղակի պապանձվեցի: Որտեղի՞ց էր կարողացել կամ ու՞մ էր հանձնարարել նա կարճ ժամանակամիջոցում ձեռք բերելու այդ հրաշքը: Իրոք որ հրաշք՝ այն ժամանակվա Երևանում: Ինչ խոսք, ես անչափ երջանիկ էի այդ անակնկալ ու շքեղ նվերի համար, որը ծառայեց ինձ այնուհետև իմ մոսկովյան ուսումնառության բոլոր տարիներին:

Իսկ այստեղ, հարազատ Երևանում ... ես մեծ հպարտությամբ վարում էի հեծանիվը հիմնականում Աբովյան փողոցում և հաճախ, երբ, ձեռքերս վարպետորեն վերցրած դեկից՝ մոտենում էի Աբովյան և այժմյան Թումանյան փողոցների խաչմերուկին, որի անկյունում մի հին, երկհարկանի տան երկրորդ հարկում ապրում էր Արուս Ոսկանյանը և հաճախ կոթնած լուսամուտին՝ նայում փողոցի անցուղարձին, - լսում էի նրա սրտաբուխ «Բրավոն», որից և ոգևորված նորից էի բարձրանում Աբովյանով, նորից իջնում, որ դարձյալ արժանանամ բաղձալի խրախուսանքին: Ապա շտապում էի Չարենցի մոտ հաղորդելու, որ Արուս Ոսկանյանից ստացել եմ խրախուսական «Բրավոն»:

Չարենցը ժպտում էր և ասում. «Արուսը բարձրաճաշակ կին է և սիրում է Պիկանտ բաներ»:

Երանելի ու անմոռաց է ինձ համար այդ ամառը:

Նույն այդ ամառը Չարենցը հաճախ էր լինում «Տուրիստ» սրճարանում, որը տեղավորված էր Ազիզբեկովի (այժմ Ա. Սախարովի անունը կրող) հրապարակի վրա գտնվող շենքի բակում.

ծաղկանոցներով շրջապատված սեղաններն իրենց գովասանն դիրքով խիստ տրամադրող էին:

Չարենցի սեղանը (այդպես էլ կոչվում էր՝ «Չարենցի սեղան», և այն երբեք չէր զբաղեցվում) գտնվում էր բակի խորքում՝ ծածկի տակ: Եվ շատ հաճախ, երբ Չարենցը երեկոյան պահերին ձեռնափայտը ձեռքին մտնում էր բակ և ուղղվում դեպի իր սեղանը, անմիջապես, կարծես մագնիսական ուժով, հայտնվում և դեպի այդ կողմն էին շարժվում ժամանակի նշանավոր մարդիկ՝ գրողներ, նկարիչներ, դերասաններ. և, երբ տեղ չէր լինում սեղանի շուրջը, կողքի սեղաններն էին միացվում. ու ծայր էր առնում մի հոտաքրքիր ու աշխույժ գրույց գրականության, արվեստի ու բոլորին հետաքրքրող բազում այլ հարցերի շուրջ:

Այդպիսին էր Չարենցը: Նրա հետ ամեն վայրկյանը իմաստավորվում ու լցվում էր անասելի հրապույրով: Նա հեշտությամբ շրջապատի մարդկանց կարողանում էր վարակել իր կենսասիրությամբ, անծայր եռանդով ու խինդով:

...Բայց անսահման էր նաև նրա անսփոփ թախիծը, և նա ահավոր էր այդ պահերին: Տարօրինակ էր. այդ մեծ մարդն իր անխառն լավատեսությամբ անասելի վախենում էր մահից. սոսկ այդ բառը երբեմն կերպարանափոխում էր նրան, իսկ երբ հուզվում էր, կարող էր երեխայի պես հեկեկալ, և մեծ ջանքեր էին պահանջվում նրան հանգստացնելու համար: Մրտամոտ նյութի մասին խոսելիս՝ հայ ժողովրդի դառն անցյալն ու թանկագին կորուստները, սիրելի կնոջ՝ Արփենիկի մահը և այլն, նա երբեմն հոգեցունց ապրումներ էր ունենում՝ հասնելով անգամ հիստերիկ լացի, ապա հետզհետե հանգստանալով, համակվում էր խոր թախիծով:

Այդ պահերին, անշարժ նստած, մտասույզ, աչքը մի կետի հառած՝ հաճախ ինձ ստիպում էր որևէ բան կարդալ կամ պատմել, միևնույն էր՝ ինչ, միայն թե կենսական որևէ ձայնով խախտվեր նրա բորբոք երևակայությամբ վերակենդանացած մղձավանջը: Հաճախ անկարող, բացահայտ խոստովանում էի, որ դժվարանում եմ նրան հետաքրքրող որևէ բան հիշել, բայց նա զայրանում էր և ստիպում, որ անպայման խոսեմ, պատմեմ՝ թեկուզ որևէ անհետաքրքրություն: Եվ երբ հնազանդվելով սկսում էի որևէ բան՝ շուտով զգում էի, որ իմ պատմելու ընթացքում նա վաղուց արդեն ինձ չի լսում և կլանված է իր մտքերով: Ավելի հավասարակշիռ պահերին նա սիրում էր թախտի վրա ծալապատիկ նստած խորհել՝ թագրեհը ձեռքին, իսկ երբեմն էլ հենց այդ նույն տեղում ստեղծագործել, մանավանդ եթե փոքր-ինչ տկար էր զգում իրեն: Գրելու պահերին նրա մոտ միշտ դրված էին լինում անբաժան ծխամորճը և որևէ ոգելից խմիչք, հիմնականում կոնյակ, որ նա օգտագործում էր փոքրիկ ումպերով՝ հաճախ կրկնելով, թե ինքը գիտե իր չափը:

Ցավոք, երբեմն աննկատ անցնում էր նա իր այդ չափը, և այդօրինակ պահերին նրա ոգու ծառու եղած խենթ անհանգստությունը ելք որոնելով ընդունում էր հաճախ կողմնակի աչքի համար անհասկանալի կամ դժվար հասկանալի ձևեր:

Մի օր նա ինձ իր հետ հյուր տարավ գուսան Մերոբի տուն: Ամառային շոգ օր էր, գնալու տեղը՝ բավականին հեռու, որի պատճառով և կառք պատվիրեց, հարմարավետ տեղավորվեց նրա մեջ և ամբողջ ճանապարհին անասելի ոգևորված տարբեր սրախոսություններ էր ուղղում կառապանին, հաճախ էլ՝ որևէ ծանոթի հանդիպելիս՝ կանգնեցնում կառքը: Տեղ հասնելուն պես նա նույն կառապանին պատվիրեց երեկոյան գալ երկու կառքով ու գուռնաչիներով՝ իրեն ետ տանելու:

Գուսան Մերոբի տանը պատրաստված էր մեծ ու ճոխ հյուրասիրություն: Դեռ նոր էինք հասցրել կառքից իջնել, Չարենցը շտապ վազեց օջախի մոտ և հետաքրքրվեց, թե ինչ ճաշ է

պատրաստել տանտիկինը: Իմանալով, որ իրեն իշխան ձուկ և թփով դրվա է սպասում, հավանություն տվեց և երեխայի պես ցատկոտելով վազեց սենյակ, բարձրացավ սեղանի մոտ մոտ դրված թախտին և, ծալապատիկ նստելով, սկսեց աղմկել, որ շուտ անեն, այլապես ինքը անոթի կմեռնի:

Ես չէի ասի, որ նա իր այդ անհամբեր պահանջներից հետո գոնե չափավոր ուտեր. նրա գոռում-գոչումը, անհամբերության բոլոր ցույցերը շատ ավելի էին, քան՝ կերած բաժինը: Լինելով քչակեր, այնուամենայնիվ ախորժակով ծաղկաքաղ էր անում տարբեր խորտիկներից՝ այստեղ ևս հանդես բերելով մեծ քմահաճություն և շեշտված ճաշակ: Սեղանի շուրջը, մեծ գովեստով արտահայտվելով հայկական ճաշերի մասին, Չարենցն ասաց, որ ինքը, թեև շատ երկրներում է եղել, շատ է ճամփորդել ու ճաշակելիքը հարստացրել տարբեր համեմունքներով, բայց հայկական ճաշերի համն ու հոտը ոչ մի տեղ չի գգացել:

Նրա անասելի առավելություններից էր և այն, որ ամեն միջավայրում կարողանում էր ստեղծել բոլորի համար հետաքրքիր մթնոլորտ և վարում էր նրանց հասկանալի, նրանց կողմից ընկալվող գրույց:

Չարենցի մոտ էին գալիս աշխատավոր մարդկանց տարբեր խավերի ներկայացուցիչների հոծ խմբեր: Հակառակ իր մեծագրադ առօրյային, նա երբեք չէր մերժում և սիրով ընդունում էր իրեն տեսնել ցանկացող, իր ընդունելությունը խնդրող բոլորին, այդ թվում և սկսնակ գրողների, և սիրող գուսանների, և գրականագիտական ու այլ սկզբունքային հարցերի մեջ պատասխաններ որոնող հետաքրքրասերների: Որքան էր ուրախանում, երբ շարքային երիտասարդ բանվորի մեջ հայտնաբերում էր պոետական շնորհքի թեկուզ մի նշույլ, և տալով նրան գործնական օգտակար խորհուրդներ, հաճախ նաև նյութական օգնություն՝ նշանակում էր հանդիպման օր ու խրախուսելով ճանապարհում:

Ջարմանալի էր այդ մեծ մարդը. բնությունը այդ ինչ առեղծվածային սիրտ էր դրել նրա նուրբ ու նեղ կրծքավանդակում:

Նա անմնացորդ էր տրվում աշխատավոր ժողովրդի յուրաքանչյուր ներկայացուցչին և ամենամեծ սիրով էլ համաձայնվում նրանց մոտ հյուր լինել՝ չվիրավորելով որևէ մեկին «մեծ» մարդու մերժումով:

Այդ օրվա հյուրասիրության ժամանակ Չարենցը հարկ եղածից ավել «տուրք տվեց» հայկական անարատ գինուն, և երբ երեկոյան իր պատվիրած կառքերը գուռնաչիների հետ մեկտեղ կանգնեցին դռան մոտ, նա գինովցած էր ըստ ամենայնի: Մինչև հյուրանոց հասնելը ամբողջ ճանապարհին ահալից ու խզված ձայնով գոռում-գոչում էր՝ համեմելով այդ ամենը «ընտիր» բառերով, որ մյուս կառքի մեջ նստած գուռնաչիները չդադարեցնեն նվագը՝ նրա սիրած ինչ-որ մեղեդի, որը քրտնաթոր ու շնչասպառ երաժիշտները նվագում էին Շիլաչի մահիլից (ուր ապրում էր գուսան Սերոբը) մինչև «Ինտուրիստ» հյուրանոցը՝ մի շնչով, անընդմեջ:

Տեղ հասնելուն պես, չափից ավելի գինով, նա չմոռացավ, սակայն, կառապաններին ու գուռնաչիներին վճարել: Մեծ ճիգեր գործադրելով գրպանների տեղը գտնելու, վերջապես ինձ ասաց, որ ես հանեմ փողը իր գրպանից: Եվ երբ ես մի բուռ թղթադրամ հանելով (հիմնականում ռուբլիանոցներ) հարցրեցի՝ թե որքան վճարեմ՝ ավելի քան համոզված, որ 2 կամ 3 ռուբլի լիուլի բավարար կլինի և նույնիսկ կդիտվի որպես շոայություն, - Չարենցն ասաց. «Ինչքան բռիդ մեջ կա, բոլորը տուր»: Ես նույնությամբ կատարեցի նրա ասածը: Եվ երբ Չարենցի հետ արդեն մտել էինք հյուրանոցի նախասրահը և բարձրանում էինք աստիճաններով երկրորդ հարկ, անսպասելիորեն ներքնից հնչեց ամբողջ ճանապարհին մեզ

ուղեկցած մեղեդին՝ այս անգամ առավել ուժգին ու զիլ, որով և մեր ետևից ինքնակամ նախասրահ մտած երաժիշտները, հավանաբար, իրենց շնորհակալությունն էին հայտնում Չարենցին՝ նրա շռայլ վարձատրության համար:

Ի վերջո, հասանք: Իր սենյակը մտնելուն պես Չարենցը ուժասպառ մեկնվեց դռան շեմին, գորգի վրա, և սկսեց իր արտառոց պահանջմունքները. այսպես օրինակ, նա պահանջում էր, որ ես մի երկաթի կտոր բերեմ (ի դեպ այդ երկաթե ռելիսի կտորը գոյություն ուներ և ծառայում էր որպես պատշգամբի դռան հենարան) իր գանգը ջարդուփշուր անելու համար: Երկար դիմադրելուց հետո, երբ ես ստիպված էի հուսահատ զայրությամբ քարշ տալով բերել պահանջված երկաթը, ինձ համար անհասկանալի արագությամբ նա սթափվեց և ժպտադեմ ասաց. «Լավ, Ռոլան ջան, ապրես, որ այդքան համարձակն ես»:

Գերլեցուն մտքի թափի կասեցում, անօրինակ ինքնատիրապետում, մարդու և մարդկայինի ներդաշնակ ամբողջության մարմնացում, - ահա այն գծերը, որ շողարձակում են ավելի քան 50 տարիների խորքից:

Մակայն միայն այդ չէ, որ մնացել է իմ հիշողության մեջ՝ իր ամբողջ որոշակիությամբ:

Անմոռանալի են այն բույները, երբ նա ազատ պահերին երբեմն զրուցում էր ինձ հետ: Այդ զրույցների թեմաները բազմապիսի էին: Նրանից եմ ես առաջին անգամ լսել հայ դասական ճարտարապետության հիասքանչ հուշարձանների, միջնադարի հայ մեծ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի, Պիժակի, ապա և Հովնաթանյանների տաղանդավոր սերնդի մասին: Առաջին անգամ Չարենցից եմ լսել Մարտիրոս Մարյանի և Հակոբ Կոչոյանի անունները, որոնց արվեստը նա շատ բարձր էր գնահատում: Որքան էլ մատչելի թեմաներ մատուցելու լինեք ինձ, որքան էլ տարբեր դրվագներ պատմեք իր ճանապարհորդություններից, որքան էլ միտքս զբաղեցնեք Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների տարաշխարհիկությամբ, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի քաղաքակրթությամբ ու արվեստով, այնուամենայնիվ՝ նրա զրույցների հիմնական առանցքը հայրենիքն էր, հայ ժողովուրդը, նրա տարաբախտ անցյալը և վերածնված ներկան:

Նա անկարող էր լինում թաքցնել իր հրճվանքը՝ երբ փորձում էր բացատրել մեր դարաշրջանի էությունը, ա՜յն դարաշրջանը, որը ծնել էր իրեն:

Բայց հաճախ, կռահելով խոսակցի ընկալունակության մակարդակը, ընդհատելով զրույցը՝ հարցնում էր, թե արդյոք հասկացա՞ իրեն. հակառակ իմ դրական պատասխանին, նա շեղ հայացքով դարձյալ գննում էր ինձ և, թափահարելով գլուխը, ասում. «Ափսոս, դեռ փոքր ես՝ շատ բաներ զգալու և հասկանալու համար»: Ցավում եմ անասելի, որ ի վիճակի չէի ես այն ժամանակ ո՛չ լիովին ըմբռնելու և ո՛չ էլ գրի առնելու, նույնությամբ հավերժացնելու նրա հորդառատ բյուրեղյա մտքերի գոհարները: Էքերմանի իսկ խոսքերով, ես բռով որսալ էի ուզում զարնանային կենարար անձրևը, բայց և որի մեծ մասը, ավա՜ղ, հոսեց մատներիս արանքով, այսօրվա համար թողնելով, միայն փայլուն կաթիլներ...:

Հիշողության այդ փայլուն կաթիլներից եմ համարում և այն, որ որպես նմանօրինակ զրույցի հետևանք, ոգեշնչված, ես մի ոտանավոր գրեցի և տվեցի Չարենցին՝ մտածելով, թե ինչպես եմ խրախուսվելու: Բայց որքան մեծ եղավ իմ հիասթափությունը, երբ նա, ոտանավորը բարեխիղճ ընթերցելուց հետո, ժպտաց և ասաց. «Թեպետ անտաղանդ է, բայց շատ անմիջական է ու ջերմ»: Այդպիսին էր նա՝ շիտակ ու խստապահանջ, փոքրերի հետ շփվելիս լինեք թե մեծերի, միևնույն է:

Ներքին գոհունակությամբ պետք է ասեմ, սակայն, որ նրան մեծ հաճույք էին պատճառում իրեն նկարելու իմ երբեմնակի փորձերը և, նկարի մեջ տիպական գծեր հայտնաբերելիս,

ուրախանում էր մանկան պես և հպարտորեն ցույց տալիս մտերիմներին:

Մի օր «Ինտուրիստ» ճաշարանում սեղանի մոտ նստած սպասում էի Չարենցին, երբ նկատեցի մի երկու սեղան այն կողմ՝ մի խումբ մարդկանց, որոնց թվում և դերասան Միքայել Մանվելյանին: Վերջինս նստած էր դեպի ինձ՝ կիսադեմ: Իմ սեղանի կողքին, լուսամուտի մոտ, շարված էին մի շարք նոտակալներ (երեկոները այդտեղ երաժշտություն էր լինում): ձեռքիս տակ չունենալով թուղթ՝ ես որոշեցի այդ նոտակալներից մեկի հենց տախտակի վրա նկարել Մանվելյանին: Նա ուներ թեպետ առաջին հայացքից խոժոռ, բայց և շատ համակրելի ու շեշտված տիպական դեմք: Մանվելյանը, երևի սպասելով մատուցողին, շատ համբերատար և անշարժ, ձեռնափայտի վրա խաչաձևած ձեռքերին կզակը հենած՝ լսում էր զրուցակիցներին: Հենց այդ էլ ինձ հնարավորություն տվեց առավել ճշգրիտ նկարել նրան. և երբ Չարենցը իջավ համարից ու նստեց սեղանի մոտ, ես շրջեցի նոտակալը և ցույց տվեցի նրան իմ նկարածը: Հիշում եմ՝ ինչպես նրա հոնքերը բարձրացան, դեմքը պայծառացավ, և նա գոչեց. «Դու նկարի՛չ ես, Ռուլան, նկարի՛չ»: ապա նկարը ցույց տալով Մանվելյանին և նրա սեղանակիցներին, կանչեց Թովմասին (ճաշարանի հնագույն մատուցողներից) և կարգադրեց այդ նոտակալը բարձրացնել իր սենյակը:

Դժվարանում եմ ասել, թե որքան էի շոյված ու երջանիկ:

Չարենցի մոտ հաճախ էին հավաքվում ժամանակի նշանավոր մարդիկ: Պարզ հիշում եմ Ավետիք Իսահակյանին, Շիրվանզադեին, Ակսել Բակունցին, Գուրգեն Մահարուն, հայ բեմի ականավոր դերասաններ Ա. Ոսկանյանին, Վ. Փափազյանին, Մ. Մանվելյանին, արվեստագետ Ռ. Թերլեմեզյանին, ճարտարապետ Մ. Մազմանյանին և էլի շատ ուրիշների: Համատեղ երեկոներից մեկում շատ խոսվեց Պ. Ադամյանի, Սիրանուշի, Ջարիֆյանի, Աբելյանի, արտասահմանում կատարած իրենց ուղևորությունների և այլնի մասին: Հիշում եմ՝ Արուս Ոսկանյանը մեծ եռանդով պատմեց Փարիզում իր հետ պատահած մի ծիծաղաշարժ դեպք:

Չարենցը, լարված ուշադրությամբ լսելուց հետո, սկսեց այն աստիճան ուժեղ ծիծաղել, որ ծիծաղի գալարումների ժամանակ գլորվեց և վայր ընկավ թախտից, ապա փոքր-ինչ ուշքի գալով՝ անընդհատ խնդրում էր. «Արուս ջան, մեկ էլ պատմիր». և նա ստիպում էր պատմել, կրկնել հատկապես այն տեղը, որը իրեն առանձնակի դուր էր եկել և, նորից լսելով՝ կրկին նույն ուժով քրքջում էր:

Այդ նույն ամռանը Չարենցը ինձ իր հետ Լենինական տարավ, ուր մնացինք երեք անմոռանալի օր (նույն գնացքում էր նաև Ավետիք Իսահակյանը, բայց նա Կիրովական էր գնում):

Թե սիրո ինչպիսի ցույցեր կազմակերպվեցին Լենինականում Չարենցի պատվին, պետք էր միայն աչքով տեսնել: Նրան շրջապատող գրասեր երիտասարդությունը հենց առաջին օրը խնջույք կազմակերպեց Չըռ-Չըռ կոչվող ջրվեժի մոտ: Չարենցի՝ Լենինականում գտնվելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքով մեկ: Գետափնյա ամբողջ բացատը հեղեղվել էր մարդկանց հոծ խմբերով, որոնք բոլորն էլ բուռն ցանկություն ունեին մոտիկից տեսնելու, լսելու կամ որևէ խոսք փոխանակելու մեծ պոետի հետ: Չարենցը անչափ զգացված էր, կասեի նույնիսկ փոքր-ինչ հուզված, ինչը վարպետորեն աշխատում էր աննկատ դարձնել շրջապատից:

.... Ինձ համար դեռ ճանապարհի զրույցից էր պարզվել, թե որքան շատ էր նա սիրում Գյումրին, սիրում գիտակցորեն, սիրում որպես ժամանակի նշանավոր շատ մարդիկ տված հայ հոգևոր մշակույթի հինավուրց ու շենշող օջախ:

Այդ նույն տարում Երևանում տեղի ունեցավ Ստեփան Շահումյանի արձանի հանդիսավոր բացումը: Չարենցը միտինգին մասնակցում էր կառավարական կազմի հետ, իսկ ես նրա տված տոմսով իրավունք ստացա մոտենալու ընդհուպ արձանի պատվանդանին: Հիշում եմ, թե ինչպիսի հպարտությամբ էի այնտեղից նայում իմ հասակակիցներին:

Արձանի բացումից հետո Չարենցը, ոգևորված օրվա անցուդարձով, անասելի երջանիկ էր զգում իրեն, ինչպես միշտ բոլոր այն նախաձեռնություններից հետո, որոնք նպաստում էին քաղաքի գեթ փոքր-ինչ կերպավորմանը: Տոնաձառի շուրջը պտտվող երեխայի անզուսպ անմիջականությամբ և հրճվանքով նա տարվել էր հուշարձանով և անընդհատ փոփոխելով դիրքը՝ տարբեր կետերից խրախուսանքով ու հավանությամբ դիտում էր այն:

Ի պատիվ հանդիսության, Չարենցն այդ օրը կազմակերպեց մեծ ճաշկերույթ. այդ օրերին նա պատվիրեց նաև Մերկուրովի ստեղծագործության մանրակերտը, որը այնուհետև միշտ պահում էր գրասեղանի վրա:

Բուռն ոգևորության պահերը, սակայն, այդ ամառ մերթ ընդ մերթ շղարշվում էին լուռ թախիծով: Անգամ ինձ- նա չէր զլանում խոստովանել իր մեծ ցանկությունը՝ ամուսնանալու, հատկապես երեխաներ ունենալու համար: Երբեմն կատակով հարց էր ուղղում ինձ, թե ինչպիսի կին հարմար կլիներ իրեն. և, հարցը երկար քննարկելուց հետո, գալիս էր այն համոզման, որ առողջ և գեղեցիկ երեխաներ ունենալու համար անհրաժեշտ է ընտրել հենց այդպիսի կին:

Այդ նույն ամռանը Համո Բեկնազարյանի հրավերով Երևան ժամանեցին մի շարք դերասան-դերասանուհիներ՝ Հայկինոյում նկարահանվելու: Դրանց մեջ էր նաև 18-ամյա մի լեհուհի՝ Էռա անունով, որը տեղավորվել էր նույն «Ինտուրիստ» հյուրանոցում: Չարենցի առաջին իսկ ծանոթությունը Էռայի հետ եղավ ջերմ ու տպավորիչ, և նա որոշեց ամուսնանալ՝ նախապես ստանալով Էռայի համաձայնությունը: Հարսանյաց սեղանի մտովի ձևավորումը և հյուրերի կազմի ընտրությունը կատարեցինք միասին (որքան հիշում եմ, հրավիրված պետք է լինեին մոտ քսան հոգի):

Նշված ժամին բոլորը ներկայացան տոնական տրամադրությամբ ու նվերներով և տեղ գրավեցին «Ինտուրիստ» ռեստորանի մատուցողների ջանքերով շքեղորեն պատրաստված սեղանի շուրջը:

Ուշացող հարսնացուին սպասելով՝ Չարենցը շարունակում էր անհանգստանալ և ստիպված եղավ պարտադրել ինձ՝ գնալ և գտնել նրան: Բանն այն էր, որ օտարազգի հարսնացուն ինչ-ինչ պատճառներով նույն օրը՝ ցերեկը, աղերսագին խնդրել էր ինձ իրեն ուղեկցել մինչև կայարան և ընդմիջտ մեկնել էր Երևանից, իսկ ես ահաբեկված այդ արտառոց դեպքից՝ չէի համարձակվել Չարենցին հաղորդել լուրը:

Անցան բոլորն ու դարձյալ բոլորներ... Եվ ես ստիպված էի Չարենցին հայտնել եղելությունը:

Չարենցը մի պահ քարացավ. նրա զվարթ դեմքը կարծես սրվեց ու գունատվեց: Բայց դա տևեց մի քանի վայրկյան միայն: Այնուհետև նա շտկվեց, վեհաշուք տեսք ընդունեց և կենսահաստատ ձայնով ու ժպտադեմ հայտարարեց, որ հարսանիքը փոխվում է քեֆի:

Նմանօրինակ ցնցող կերպարանափոխություն և զարմանալի ինքնատիրապետում հատուկ է երևի միայն ՄԵԾԵՐԻՆ:

Խնջույքը այնուհետև ընթացավ խիստ բնական, անկաշկանդ: Ներկաներից և ոչ մեկը հեռավոր ակնարկով անգամ զգալ չտվեց պահի տարօրինակությունը:

Մեկ տարի անց ես մեկնեցի Մոսկվա՝ ուսումնա շարունակելու: Այդ ժամանակ էր, որ

իրագործվել էր Չարենցի ցանկությունը. նկարիչ Արարատ Ղարիբյանի տանը ծանոթանալով Իգարելյա անունով աղջկա հետ՝ նա շուտով ամուսնանում է և նամակով հայտնում ինձ, իր իսկ խոսքերով՝ մեծայա և սևայա, առողջ ու գեղեցիկ աղջկա հետ ամուսնանալու լուրը:

1936 թվականի մայիսին Մոսկվայից վերադարձա Երևան և հենց առաջին օրը մտադիր էի այցելել Չարենցին, երբ երիտասարդ գրող Գարեգին Բեսը եկավ մեր տուն և ասաց, թե Չարենցը շտապ կանչում է ինձ (բայց ինչպե՞ս էր իմացել գալուս օրը... անկեղծ ասած առ այսօր դժվարանում եմ հասկանալ):

Այդ ժամանակ Չարենցն ապրում էր իր նոր ստացած բնակարանում (այժմյան Մաշտոցի պողոտայի վրա), ուր և ծանոթացա կնոջ՝ Իգարելյայի հետ և տեսա նրանց հրաշալի դուստրերին: Ավագ դուստրը՝ Արփենիկը (Բոժիկը), չորս տարեկան էր, իսկ կրտսերը՝ Անահիտը (Ադոկը)՝ մոտ երկու տարեկան:

Չարենցը բավականաչափ փոխված էր, ընկճված ու վատառողջ: Նա մի տեսակ մեծացել էր, կարծես կքել էր հոգսերի տակ. երբեմնի աշխույժ, պայծառ դեմքին ու աչքերին թախիժ էր իջել, և ժպիտն էլ դարձել երկչոտ ու խեղճ:

Ինձ հետ ունեցած երկար հարցուփորձի ժամանակ (իմ գործերից, Մոսկվայից) նա շատ ցրված էր ու մտահոգ, դեմքը պայծառանում էր միայն, երբ հայացքն ուղղում էր քնած երեխաների կողմը:

Այդ նույն՝ 1936 թվականի ամռանը Չարենցը Իգարելյային երեխաների հետ ուղարկեց Ծաղկաձոր, իսկ ինքը մնաց քաղաքում: Օրերով տնից դուրս չէր գալիս և նստած գրասեղանի մոտ՝ անընդհատ գրում էր ու գրում:

Այդ օրերին էր. Չարենցի մոտ գնալիս այդ անգամ մենակ չէի, ինձ հետ էր նաև բարեկամուհին՝ իր աղջնակի հետ: Մեզ տեսնելով՝ Չարենցը, հակառակ իր վատառողջ վիճակին, շատ ուրախացավ, առանց վայրկյան կորցնելու վեր կացավ տեղից և ասելով, թե անմիջապես կվերադառնա, հենց տնային հագուստով դուրս եկավ: Պատշգամբ դուրս գալով տեսա, որ Չարենցը փողոցն արդեն անցել և ուղղվել էր դեպի դիմացի կրպակը: Քիչ անց նա վերադարձավ մի մեծ ձմերուկ ձեռքին և խիստ գոհ, որ մեզ և իր փոքրիկ հյուրին կարող է հյուրասիրել (այդ իմ փոքր բարեկամուհին՝ Մեսալինա Խալեյանը այժմ աշխատում է Չեխովի անվան դպրոցում որպես ուսմասվար): Այդ օրը Չարենցը նվիրեց մի թանաքաման և գրիչ մասունքներ, որոնք առ այսօր պահվում են Մեսալինայի մոտ:

Երբեմնի ամենօրյա աշխույժ այցելություններից ոչինչ չէր մնացել. նրա մոտ այլևս համարյա ոչ ոք չէր լինում. նա մենակ էր, լքված և կարիքի մեջ: Ես նրա մոտ մեկ անգամ միայն հանդիպել եմ Ադասի Խանջյանին, բժիշկ Գաբրիել Հարությունյանին և էլի 1-2 հոգու:

Ադասի Խանջյանի՝ Թբիլիսի մեկնելու օրը Չարենցը ինձ տվեց մի գրություն և և խնդրեց անպայման կայարան գնալ և հանձնել Խանջյանին:

Չիջում եմ, շոգ երեկո էր. երբ հասա կայարան, արդեն մթնշաղ էր: Կառավարական գնացքը կանգնած էր երկրորդ գծի վրա. հենց այդտեղ՝ կառամատույցում տեսա Խանջյանին. սպիտակ վերնաշապիկը հագին նա ճեմում էր մի քանի հոգու հետ՝ սպասելով գնացքի մեկնելուն: Սկսեցի զգույշ մոտենալ առաջին անցուղով և մտածում էի, թե ինչպես կատարեմ Չարենցի հանձնարարությունը, երբ Խանջյանը տեսնելով և երևի զգալով, որ իրեն եմ ուզում մոտենալ, ինքն անցավ գծերի վրայով և մոտենալով ինձ՝ հարցրեց. «Ինչպե՞ս է Չարենցը». ես անմիջապես նրան հանձնեցի գրությունը, որը առանց կարդալու նա դրեց գրպանը և ասաց, որ բարևեմ Չարենցին: Ես հեռացա՝ աչքերիս մեջ տանելով Խանջյանի մտահոգ դեմքն ու թախձոտ աչքերը:

Հիմա ինձ ներել չեմ կարողանում, որ Չարենցի ձեռքով ծալված անձրար թուղթը չմտածեցի անգամ բաց անել, հանգամանք, որն այսօր թերևս հնարավորություն կտար պարզելու որևէ հանգույց այդ գերլարված օրերի եղելություններից. արդյո՞ք այդ գրությունը կապ ուներ այն փաստաթղթի հետ, որը Չարենցն ինձ ցույց էր տվել մի երկու օր առաջ՝ Խանջյանի ստորագրությամբ, որով նրան պետք է Փարիզ ուղարկեին բուժվելու...

Ոչինչ, ոչինչ պարզ չէ ինձ համար այսօր, պարզ է միայն այն, որ Չարենցն այդ շրջանում շատ էր ընկճված, և իմ ջանքերը՝ նրան պաշարող ահավոր մտքերը որևէ կերպ ցրելու, անցնում էին ապարդյուն: Ես այն ժամանակ քիչումիչ դաշնամուր էի նվագում: Իր աշխատասենյակից Չարենցը հաճախ ստիպում էր ինձ գնալ հյուրասենյակ, որտեղ դրված էր դաշնամուրը, և նվագել որևէ բան: Իմ նվագացանկը շատ սահմանափակ էր, և ես նույն երգերը կամ վալսերը կրկնում էի տասնյակ անգամ. և երբ մատներս թմրում էին, ու ես դադարում էի նվագել, Չարենցը գոռում էր իր սենյակից, որ շարունակեմ. երբեմն էլ, երբ արդեն ի վիճակի չլինելով՝ դադարեցնում էի նվագը և զգում էի, որ լռություն է տիրել, կամաց մոտենում էի նրա աշխատասենյակի դռանը ու տեսնում, որ նա գրասեղանի մոտ, գլուխը հենած ձեռքերին, լուռ հեկեկում է:

Աղասի Խանջյանի մահվան բոթը ցնցեց Չարենցին: Շատ եմ ցավում, որ այդ լուրը հաղորդողը ես եղա՝ փողոցում ակամա ականատես լինելով մահվան մի լուռ ու տարօրինակ թափոթի: Իմանալով ով է հանգուցյալը, քայլերս անմիջապես ուղղեցի Չարենցի տուն, ասելով, թե Թբիլիսիից բերվել է «ինքնասպան» եղած Խանջյանի դին:

Մինչև հիմա չեմ կարող մոռանալ այժբերիս առաջ կատարված ցնցող տեսարանը: Չարենցը թավալզոր եղավ հատակին ու սկսեց հեկեկալ. մի բան նա ասաց միայն. «Մուտ է, նա չէր կարող ինքնասպան լինել»:

Անցան օրեր... Իզաբելյան երեխաների հետ վերադարձավ ամառանոցից:

...1937 թվականին Չարենցը ձերբակալվեց:

Իզաբելյայի հետ ես էլ էի երբեմն բանտ գնում՝ Չարենցին ուտելիք և դեղորայք հասցնելու: Չարենցի լյարդը և լեղապարկը լուրջ հիվանդ էին, և նա դեռ տանը բժիշկների թույլտվությամբ սրսկվում էր ցավերի դեմ: Մի օր Իզաբելյան, երբ ուտելիք էր տարել բանտ և ետ ստացել Չարենցի շորերը՝ տանը լվանալու, սպիտակեղենը ջրի մեջ իջեցնելու պահին Չարենցի շապիկի մեջքին (ներսի կողմից) քիմիական մատիտի բծեր է նկատում և որոշ բառեր: Անմիջապես հանում է շապիկը, դնում սեղանին և հևհև ինձ մոտ հասնում հայտնելու, որ գրված բառերը չի կարողանում ջոկել միմյանցից և որ միայն իմ անունն է կարողացել կարդալ:

Նախապես ետ ուղարկելով Իզաբելյային, առանց վայրկյան կորցնելու Չարենցի տուն հասա: Միասին ուղղեցինք թաց շապիկը, վերցրինք Չարենցի գրասեղանից խոշորացույցը և կարդացինք հետևյալը. «Իզաբելյա, լավ նայիր երեխաներին, փրկիր ձեռագրերս և այդ հարցով դիմիր միայն ու միայն Ռեզինային և վստահիր նրան»:

Մենք աննկարագրելի արագությամբ հազիվ միայն շապիկից թղթի վրա արտագրեցինք սրտակեղեք այդ տողերը և, անգիր անելով գրածը, ոչնչացրինք անգամ այդ թուղթը... որից հետո Իզաբելյան շտապ դատարկեց միջին չափի մի ճամպրուկ և, բացելով Չարենցի գրասեղանի դռները, կարծես տենդի մեջ, հապճեպորեն ու խառնիխուռն խցկելով տարբեր դարակներից աջ ու ձախ ձեռքն ընկած ձեռագրերը՝ մոտ քսան թղթապանակ, տեղավորեց այնտեղ: Վերջին երեք հաստափոր թղթապանակները չտեղավորվեցին ճամպրուկում: Ի՞նչ անել. խառնաշփոթ որոնումների մեջ, աշխատասենյակում չտեսնելով ոչինչ պատշաճ, մենք

անցանք խոհանոց. այնտեղ իմ ուշադրությունը գրավեց անկյունում դրված հասարակ ֆաներայից պատրաստված գորշագույն նեղ պահարանը, որտեղ Իզաբելլան ամանեղեն էր շարում: Միխիթարականն այն էր, որ պահարանը կրկնահատակ էր. հենց այդ կրկնակի հատակի արանքում էլ տեղավորեցինք մյուս երեք թղթապանակները, պահարանը թողնելով կանգուն՝ նույն տեղում: Ես մտածում էի, որ հետագայում, հարմար առիթով, այն հեշտ դուրս կբերվի Չարենցի բնակարանից, որպես ծայրահեղ անպաճույճ իր: Դրանից հետո գերհուզված վերադառնալով աշխատասենյակ՝ Իզաբելլան ձեռքս տվեց լեցուն ճամպրուկը և հեկեկալով ուղեկցեց ինձ:

Ինձ վրա դրված էր աներնակայելի պատասխանատվություն. անհրաժեշտ էր ամեն գնով փրկել ձեռագրերը: Սրտի դողով, բայց հաստատակամ ես այն հասցրի տուն և հենց նույն գիշերը իմ հարազատներից մեկի տան ներքնահարկում (նախկին Ադամյան փողոց 7.այժմ Կ. Մարքսի նրբանցք) փոս փորեցի և, չունենալով ձեռքի տակ ավելի հուսալի հարմարանք՝ հապճեպորեն զմռսեցի միջին չափի մի տակառ, թղթապանակները փաթաթեցի մոմլաթի տարբեր կտորների մեջ և դասավորելով տակառում՝ հանձնեցի հողին:

Ահա մի պատահիկ այդ մասունքներից.

«ԶԿԱ ԱՎԵԼԻ ԱՄԵՇԻ ՊԱՏԻԺ, ՔԱՆ ԱՅՆ, ԵՐԲ ՄԱՐԴՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԻԲԲԵՎ ԴԱՎԱՃԱՆՈՂԻ ՄԻ ԳԱՂԱՓԱՐԻ ԴԵՄ, ՈՐԸ ՀԵՆՑ ՆՐԱ ՄԻԱԿ ՍՐԲԱԶԱՆ ԵՎ ՄԻԱԿ –ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՄԻԱԿ ԳՈՐԾՆ ՈՒ ԻՄԱՍՏԸ ԿԱԶՄՈՂ ԳԱՂԱՓԱՐՆ ՈՒ ԳՈՐԾՆ Է: ԵՎ ԶԿԱ ՈՉ ՄԻ ՄԻԶՈՑ ԱՅՐ «ՀԱՄԱՐԱԿ» ԼՈՒՅՄԻ ՊԵՍ ՊԱՐԶ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՑՈՒՑԵԼՈՒ:

ՔԱՆԶԻ ԶԿԱ ՏԱՆԶԱՆՔ ԱՎԵԼԻ ՄԵԾ, - ԵՎ ՊԱՏԻԺ ԱՎԵԼԻ ՄԵՎ, -ՔԱՆ ԴԱՏԵԼ ՄԱՐԴՈՒՆ՝ ՆՐԱ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ, ՆՐԱ ՈՂԶ ԿՅԱՆՔԻ ՄԻԱԿ ԳՈՐԾԻՆ ԴԱՎԱՃԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԵՎ ԶԿԱ ՈՉ ՄԻ ՄԻԶՈՑ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ, ՀԱՄՈԶԵԼՈՒ, ՈՐ ԱՅՐՊԵՍ ԶԷ-ՈՐ **ՀԵՆՑ ԱՅՐ ՆՈՒՅՆ ՄԵՂՔԻ ՕԲՅԵԿՏՆ Է ԻՄ ՄԻԱԿ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ.**

ԱՅՐ ՄԻԵՎՆՈՒՅՆՆ Է, ԹԵ ՀԱՆԿԱՐԾ ԼԵՆԻՆԻՆ 1917 ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՀԵՆՑ ՆՐԱ ԱՄԵՆԱՄՈՏԻԿ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ – ԱՄԵՆԱՆԿԱՄԿԱԾԵԼԻՆԵՐԸ – ՀԱՆԿԱՐԾ ՄԵՂԱԴՐԵԻՆ, ԹԵ ՆԱ ԿԱՄԵՆՈՒՄ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ – ՍՈՒԲԵԿՏԻՎՈՐԵՆ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ (ԵՎ ՈՉ ԹԵ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՆԹԱԴՐԵԼԻ ՀՆԱՐՔՈՎ)- ԶԳՏՈՒՄ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՆԻԿՈԼԱՅ ՌՈՄԱՆՈՎԻ ԴԻՆԱՍՏՅԱՆ... ՈՐ ՆԱ ԾՊՏՅԱԼ ՄՈՆԱՐԽԻՍՏ Է...

...ԵՎ ԴԱՏԵԻՆ ՆՐԱՆ, ԵՎ ՈՐՈՇԵԻՆ, ԵՎ ՀԱՅՏՆԵԻՆ Ի ԼՈՒՐ ԱՇԽԱՐՀԻ - ԵՎ ԳՆԴԱԿԱՀԱՐԵԻՆ ԻԲԲԵՎ ՄՈՆԱՐԽԻՍՏԻ ...ՀԱՆՈՒՆ ԼԵՆԻՆԻԶՄԻ, ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ...

Եղիշե Չարենց 1937.1. 3

(Ձեռագիրը առայսօր գտնվում է ինձ մոտ- Ռ. Ղ.)

Որոշ ժամանակ անց, 1937 թվականի աշնանը, ձերբակալվեց նաև Իզաբելլան: Նույն այդ օրը հրավիրված էի բարեկամներիս մոտ ճաշի: Դեռ սեղան չնստած, պատուհանների մոտ մի մեքենա կանգնեց, և այնտեղից դուրս եկան մի քանի հոգի. մոտենալով բնակարանին նրանք հարցրին, թե ով է Ռեգինա Ղազարյանը: Հենց այդտեղ էր, որ անջատվելով խմբից ինձ մոտեցավ ներքին գործոց ժողկոմատի գնդապետ Պավել Աբուլյանը և ցույց տվեց մի գրություն՝ Չարենցի և Իզաբելլայի ստորագրությամբ այն մասին, որ երեխաների բախտի

առաջիկա տնօրինման հարցը ինձ է հանձնարարվում: Ապա ներքին գործոց նախարարությունում, Պ. Աբուլյանի առանձնասենյակում, նրա իսկ թելադրանքով, ես գրեցի փաստաթուղթ, որով պարտավորվում էի պահել և սոցիալիստական ոգով դաստիարակել երեխաներին, մինչև հանգամանքների պարզաբանումը:

Նույն մեքենայով նրանք ինձ տարան Չարենցի բնակարանը՝ երեխաներին վերցնելու (ճշգրտության համար նշեմ, որ Չարենցից հետո Իզաբելլային տեղափոխել էին նույն փողոցի «Ինտերնացիոնալ» կոչվող շենքի մեկ սենյականոց բնակարանը: Իզաբելլայի ձերբակալումից հետո կնիքով փակված նախկին բնակարանում խուզարկություն կատարելու պատճառով երեխաները ետ էին բերվել հին հասցեով): Անձրև էր մաղում. երեխաները որևէ հսկողությունից ազատ իջել էին փողոց և խաղում էին հենց տրամվայի գծերի վրա (այն ժամանակ այսօրվա Մաշտոցի պողոտայով, որը կոչվում էր Մունդուկյանի փողոց, տրամվայ էր անցնում): Մեքենան կանգնեց դռան մոտ. թողնելով ինձ երեխաների հետ, Պ. Աբուլյանն ասաց, որ իրեն սպասեմ վերևում և գնաց, շուտով վերադառնալու պայմանով. ես մոտեցա երեխաներին և գրկելով փոքրին ու մեծի ձեռքը բռնելով՝ բարձրացա Չարենցի բնակարանը: Այնտեղ, ինչպես ասացի, խուզարկություն էր կատարվում:

...Ճիշտ է, անցել է ավելի քան 50 տարի, բայց դժվար է մոռանալ այքերիս առջև բացված տեսարանը. նախկինում սրբավայր ներկայացնող բնակարանը վեր էր ածվել ավերակույտի. երիտասարդ խուզարկուների կողմից պահարանների և գրասեղանի տարբեր դարակներից անտարբեր սառնասրտությամբ դուրս էին հանվում և աջուձախ նետվում, երբեմն նաև մի կողմ դրվում մեծ պոետի սիրած ու փայփայած, նրան հոգեհարազատ, մեծարժեք ու նվիրական տարբեր իրեր, գրքեր, դարձյալ գրքեր, անգամ հուշանվերներ:

Անտրամաբան մոլուցքով քանդվող բոլոր ներքնակներից ու բարձերից դուրս նետված ու օդում լողացող բրդերն ու փետուրները պատկերը դարձրել էին անսովոր ու ահագոյ:

Ես քարացել էի դռան շեմին կանգնած. արցունքները խեղդում էին ինձ... Եվ երբ Պ. Աբուլյանը վերադարձավ ու առաջարկեց ինձ վերցնել իրերից ինչ ցանկանում եմ, ես ասացի, որ բացի երեխաների շորերից ու անկողնուց, ինձ ոչինչ պետք չէ: Մեկ-երկու փալաս, երեխաների խիստ սահմանափակ հագուստներ և նրանց վերմակները. ահա այն ամենը, ինչը ես վերցրի:

Պավել Աբուլյանի զարմացական հայացքի տակ, տան բազում շքեղ իրերը թողած, ես խնդրեցի միայն խոհանոցի հնագորշ նեղ պահարանը ու շուտով այնտեղ տեղավորելով երեխաներին պատկանող իրերը՝ բեռնակրի օգնությամբ այն դուրս բերեցի սենյակից և, երեխաներին առժամանակ թողնելով հարևանների մոտ, շտապեցի պահարանը հասցնել տուն:

Կատարվածը հրաշքի էր նման. ոչնչացման ամենակուլ երախից դուրս էր թռել և կենդանություն ձեռք բերել բանաստեղծի իրերի խուզարկության ժամանակ – ամենափնտրելին: Հետին թվով, չեմ կարող ես այսօր բարի խոսքով չհիշել Պ. Աբուլյանին, որը հիշողությանս մեջ վեր է հանում որպես ժամանակի անօրեն պարտականությունները ճարահատյալ ու ցավով կատարող պաշտոնյա:

Չարենցի թողած ծով ժառանգությունից, այսպիսով, որը Իզաբելլան այդպես էլ հնարավորություն չունեցավ ամբողջովին հանձնել ինձ, ի բացառյալ վերը նշված թղթապանակները, փրկված էին նաև վերջին երեքը:

Պահարանը տուն հասցնելուց հետո ես անմիջապես վերադարձա և տարա երեխաներին.

Մեսալինա Խալեյանը հիշում է. «1937 թվին, երբ ես ինը տարեկան էի, Ռեզինա Ղազարյանը

(որը այդ թվականներին ապրում էր մեզ մոտ, մեր տանը) մի օր, արդեն աշնան կողմը, տուն եկավ շատ հուզված և, հետը բերելով Չարենցի երեխաներին, ասաց, որ նրանք մեզ մոտ պետք է ապրեն:

Չարենցի դուստրերը՝ Արփենիկը և Անահիտը փոքր էին, և ինձ շատ ուրախացրեց, որ ես ձեռք բերեցի այդպիսի հիանալի քույրիկներ:

Մեր պայմանները սուղ էին, և Ռեգինայի ապրումները տեսնելով, մայրս դիմելով նրան, ժպտադեմ ասաց (շատ լավ եմ հիշում այդ խոսքերը)՝ ոչինչ, մի կերպ կապրենք. մեկ բաժին կերակուրը կբաժանենք երեք տեղ. և սիրով ընդունեց երեխաներին:

Կարող եմ հավելել, որ որոշ վաստակ տուն բերելու համար արվում էր ամեն ինչ (գիշերներն անքուն լողունգներ գրել, դեկավարների դիմանկարները մեծացնել և այլն) այդ սուղ պայմանները թեթևացնելու համար, որպեսզի երեխաները նոր տարվա օրը ունենան գաղտնի դրված տոնածառ, զարդարված թեկուզ և մեր կողմից պատրաստված թղթե խաղալիքներով: Այդ օրերին էր, որ Ավետիք Իսահակյանը (ինչպես ինձ հաղորդեցին) ցանկություն էր հայտնել այցելել ինձ՝ Չարենցի երեխաներին տեսնելու: Ես անչափ ուրախ էի. նշված օրը վարպետը եկավ և որոշ հարցուփորձից հետո ցանկացավ նայել Չարենցի որոշ ձեռագրեր: Վերջին երեք թղթապանակները դեռ ինձ մոտ էին, և ես չէի հասցրել դրանք միացնելու թաղված մյուս ձեռագրերին: Վարպետը մեկամեկ ձեռագրերը նայելուց հետո առանձնապես կանգ առավ մանր ու խիտ գրված չորս մեծ էջերի վրա, նկատելիորեն հուզվեց և դողացող ձեռքերով երեխաներին նստեցնելով ծնկներին՝ սկսեց լուռ արտասովել: Արտասովում էի նաև ես: Մոտ երկու ժամ մնալուց հետո վարպետը երեխաների համար մի ծրարի մեջ 150 ռուբլի հանձնեց ինձ՝ և գնաց: Այդ այցելությունը միակն էր ամբողջ հայ մտավորականության այն ժամանակվա ներկայացուցիչների կողմից:

Երեխաները մնացին ինձ մոտ շուրջ մեկ տարի: Բայց ուսումնա շարունակելու անհրաժեշտությամբ ես պետք է Մոսկվա մեկնեի: Այդ առիթով դիմեցի Իզաբելլայի հարազատ մորը՝ Աննա Կողբաշյանին և խնդրեցի վերցնել երեխաներին: Լինելով բարի ու սրտացավ մայր, այսուհանդերձ նա որոշ տատանումներից հետո միայն համաձայնվեց. բարդ ժամանակներ էին, շատ բարդ: Վախենում էին բոլորը, բոլորը...

Դրանից հետո ես մեկնեցի Մոսկվա:

Անցան 17 ձիգ տարիներ:

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ ես բանակում էի և երագում էի անփորձանք վերադառնալ Երևան, աղերսում էի Աստծուն, պատահականությանը թե բնության հզոր արդարադատությանը, որ պահպանվի իմ կյանքը, որ ինձ ոչինչ չպատահի հանուն այն բանի, որ ձեռագրերը նորից լույս աշխարհ գան և ծառայեն իրենց նպատակին: Այլ կերպ նրանք առ այսօր վաղուց արդեն փոշիացած՝ մնացած կլինեին հողի տակ:

Ես վերադարձա, բայց դեռ չէի համարձակվում մոտենալ այն վայրին, որտեղ պահված էին այդ ձեռագրերը: Եվ միայն 1954 թվականին, երբ Ա. Միկոյանը Երևան եկավ ընտրողների հետ հանդիպելու և օպերային թատրոնի շենքում իր արտասանած ճառում երկար տարիների լուրջությունից հետո առաջին անգամ արտասանեց ՉԱՐԵՆՑ անունը և ժողովրդի սրտաբուխ ցնծության ու խանդավառ ծափահարությունների ուղեկցությամբ նշեց նրա ժառանգության նշանակությունը և այն, որ Չարենցը պետք է հրատարակվի – ես կիսախելագար վիճակում հենց նույն գիշերը հասա պահված ձեռագրերի սրբավայրը և հանեցի զմռսած տակառը թաքստոցից:

Թող ինձ ներվի, որ ինձանից անկախ պատճառներով, սրտի մեծ ցավով խոստովանեմ պիտի, որ երկար տարիների խոնավությունից այդ ձեռագրերի մոտ 15 տոկոսը քայքայվել էր, փոշիացել, մոտ 10 տոկոսն էլ կիսաքայքայվել: Այս օրերից գրեթե անհնար է ետադարձ պատկերացումով ճեղքել անցյալի մշտնի վարագույրը՝ վերակենդանացնելու որոշակի էջեր. հանճարեղ պոետն անգամ մարմնավորել է այդ՝ անձայն հեկեկանքով, «անօգ» և «շվարած»:

Այդուհանդերձ, հոգու մեծ ցանկությամբ, պոետի իսկ լավատեսությամբ վարակված՝ ԱՆՇՆՈՐՀԱԿԱԼ ԼԻՆԵԼԸ ՄԱՐԵԼՈՎ ԹՈՒԼՈՒԹՅԱՆ ՆՇԱՆ, ես փառք տվեցի պատահականությանը, մայր հողին, որ ձեռագրերի մեծ մասը թեպետ դալկացած, բայց լրիվ պահպանվել և մնացել էր ընթեռնելի: Մի զգալի մասն էլ այնպես թարմ էր, կարծես հենց նոր էր գրված: Այդ ձեռագրերի թվում էին բեյթեր, ռուբայաթներ, դիստիքոսներ և այլ գործեր, ինչպես նաև «Կոմիտաս» պոեմի մաքրագիր օրինակը 96 թերթ (142 ութնյակ), բացառությամբ վերջին մի քանի ութնյակների՝ գրված 1936 թվականի մայիսին, Կոմիտասի աճյունը Փարիզից հայրենիք փոխադրելու և մայր հողում ամփոփելու օրերին:

Հետագա քայքայումից փրկելու նպատակով կիսաքայքայված և դժվար ընթեռնելի ձեռագրերի վերծանման, կարգավորման և արտագրման համար անհրաժեշտ է եղել կատարել տևական, մանրակրկիտ աշխատանք: Պոետական ճիշտ արտահայտող անտիպ պատատիկների վերջին էջերի վերծանման գործում ինձ օգնության է հասել մեծ երախտավորը՝ Պարույր Սևակը: Մեր տանը երկար գիշերներ, զինված խոշորացույցերով, Սևակը մեծագույն սիրով և անհուն համբերությամբ կարողանում էր կռահել և տառ առ տառ վերականգնել ձեռագրի որոշ խաթարված մասեր՝ հասցնելով այն՝ ամբողջության:

... **Խնդիրը, սակայն, այն համաժողովրդական սեփականություն դարձնելն էր.**

այդ իսկ պատճառով, Չարենցի իրավունքների վերականգնումից հետո, դեռևս 1955 թվականին, անտիպ ձեռագրերի մի մասը, այդ թվում և «Կոմիտաս» պոեմի վերջնական մաքրագիր տարբերակը հանձնեցի Չարենցի ավագ դուստր Արփենիկին՝ որպես նվեր, պայմանով, որ դրանք հավասարապես պատկանում են երկու դուստրերին:

Ինձ մոտ մնացած ձեռագրերի մի փոքր մասը՝ 2280 տող, որոնց դեռ չէի հասցրել ծանոթանալ, կարիք էր զգում լրացուցիչ վերծանման: Անհրաժեշտ էր պարզել, թե, ի վերջո ինչ է հանձնված եղել ինձ, և ինչ է այդքան երկար տարիներ պահվել հողի տակ: Այդ մասի վերծանման աշխատանքները ևս հասցնելով որոշակի աստիճանի՝ ես 1967 թվականին դիմեցի Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն. Հարությունյանին՝ թույլ տալու ինձ Չարենցի 70-ամյա հոբելյանի օրը հայ ժողովրդին պաշտոնապես վերադարձնելու պոետի վերջին անտիպները (ինձ մի աներևույթ ձայն մշտապես հուշել է, Չարենցը այդպես կցանկանար): Այդ պաշտոնական հանձնումը, չգիտես ինչու, համարվեց ոչ նպատակահարմար, և ձեռագրերը դարձյալ մնացին ինձ մոտ մինչև 1969 թվականը:

1967 թվականին, Չարենցի 70-ամյակի առիթով հեռավոր Ուֆայից Մոսկվա է ժամանում Իզաբելլան և լինում Ա. Միկոյանի մոտ՝ ընդունելության, խնդրելով օգնել իրեն վերստին Երևան վերադառնալու: Հայաստանի կառավարության կողմից իրեն խոստացված բնակարանի հարցերը կարգավորելու նպատակով նա գալիս է Երևան և մոտ երեք ամիս ապրում ինձ մոտ: Պարզվում է, որ նա աքսորավայրում ամուսնացել էր մի բուժաշխատողի հետ, ունեցել հինգ զավակ ու ինչ-ինչ պատճառներով որոշել կյանքի այդ փուլը նորից ապրել Երևանում, որպես անցյալի հախուռն օրերի կենդանի հուշ: Ամեննին էլ տարօրինակ չէր տեսնել այդ ժամանակ Երևանի գրասեր երիտասարդության հոսքը մեր տան հասցեով:

Չարենցը կենդանացած...

Գալիս էին ու գալիս, նայում էին ու հրճվում, զրուցում էին ու ողջագուրվում, զարմանքով դիտում կյանքի թոհուրոհով անցած այդ կենդանի մասունքը:

Իսկ Իզաբելլան... կարծես նա ջնջել էր իր կյանքի իրական քարտեզից վերջին՝ իր նեղ, հարկադրական անձնականի տարիները և ապրում էր բացառապես Չարենցով, նրա հետ կապված բազում ճշգրիտ մանրամասներով: Ոգի էր կարծես, որ հայտնվել էր լույս սփռելու կնճռոտ, վիճելի հարցերի վրա, ուղղելու, բացահայտելու Չարենցին բնութագրող նոր շտրիխներ, ողբերգորեն անդրադառնալու 1936-37 թթ. անցուդարձին և ուրիշ շատ ուշատ մանրամասների:

Իզաբելլայի հիշողության շնորհիվ երիտասարդությունը հաղորդակից էր դառնում Չարենց-մարդու և Չարենց-ստեղծագործողի կյանքին կապված այնպիսի մանրամասնությունների, որ միայն բանաստեղծի հետ ապրած անձնավորությունը կարող էր պատմել՝ կենցաղային վարք ու բարքից մինչև մեծ պոետի անեզր ներաշխարհի բարդությունները ուրվագծող դեպքեր, դեմքեր ու կապեր:

Այդ օրերին էր, երբ հնչեց մեր հեռախոսի զանգը, և Մարտիրոս Սարյանի կինը՝ տիկին Լուսիկը, նախապես տեղյակ, որ Իզաբելլան ինձ մոտ է, խնդրեց անպայման նրան տանել իրենց տուն՝ ասելով, որ վարպետ Սարյանը մեծ ցանկություն ունի տեսնելու նրան:

Նույն օրը երեկոյան, մենք եղանք Սարյանենց մոտ: Ինչ խոսք, շատ տարիներ էին անցել, բայց անչափ էին 30-ական թվականների հիշողությունները և վարպետը կլանված լսում էր Իզաբելլայի ողիսականը:

Մոտ երեք ամիս ինձ մոտ ապրելուց հետո նա մեկնեց Ուֆա (իր կյանքի միջին հանգրվանը) և ապա աշնանը նորից և այս անգամ արդեն ճակատագրի թելադրանքով ընդմիջտ ժամանեց Երևան: Առողջական վիճակի պատճառով հարկ եղավ նրան տեղավորել հատուկ բուժմիավորման հիվանդանոցում (այդ գործում այն ժամանակ մեծապես օգտակար եղավ Արտո Եղիազարյանը, որը հաճախ էր լինում մեզ մոտ):

Դրանից հետո Իզաբելլան ապրեց մոտ երեք ամիս և մահացավ հիվանդանոցում: Նրա թաղումը կատարվեց գրողների միության օգնությամբ:

Նոր բնակարանի համար իրեն հանձնված բանալին այդպես էլ անգործածելի մնաց: Նրանից մնացին միայն բազում գրառումներ ու ձայնագրություններ՝ տանը և հիվանդանոցում կատարված հարցազրույցների, որոնց ժապավենների մի մասն էլ պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Չարենցի 70-ամյա հոբելյանի նախօրեին, «Գրական թերթի» խմբագիր, ճանաչված բանաստեղծ Համո Սահյանը երիտասարդ գրողներ Ռազմիկ Դավոյանի, Ռուբեն Հովսեփյանի և Ֆելիքս Մելոյանի հետ, եկան ինձ մոտ՝ ծանոթանալու Չարենցի անտիպներին և ընտրելու մի քանի գործ՝ թերթում տպագրելու համար:

Երիտասարդների կողմից հետագա երկու օր տևող փութաջան աշխատանքից հետո ընտրված՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո», «Զվարթ գիտություն» և ուրիշ այլ գործեր տպագրվեցին «Գրական թերթի» 1967 թվի հունվարի 13-ի և մայիսի 13-ի համարներում, իրականացնելով սակայն, Համո Սահյանի կանխագուշակումն այն մասին, որ այդ համարձակության համար իրեն անպայմանորեն կազատեն զբաղեցրած պաշտոնից:

Այդպես էլ եղավ. բայց ի՞նչ փույթ. կատարված էր առաջին քայլը:

Եվ «Գրական թերթում» լույս տեսած անտիպները ճանապարհի բացեցին Չարենցի թողած մեծ ժառանգության մնացած մասի համար:

Չմոռանամ նշել նաև, որ մինչ այդ, դեռևս 1960 թվին, Համո Սահյանը իր մի քանի ընկերների հետ այցելել էր իմ արվեստանոցը, խնդրելով ծանոթանալ Չարենցի որոշ ձեռագրերի: Հիշում եմ. դարակից հանելով մի շարք էջեր, ես սիրով տրամադրեցի այն՝ Պոետին. մեծ ուշադրությամբ ձեռագրերը կարդալուց հետո, նկատելի հուզումով նա գրեց երկու էքսպրոմտ, որոնցից մեկը նույնությամբ հարմար եմ տեսնում ներկայացնել ընթերցողին.

Այս դարակում դաժան մի դար,
Մոխիր ցավի ու մորմոքի,
Այս դարակում մի ողջ աշխարհ,
Մի ողջ հոգի:
Այս դարակում
Մարած կյանքի մի պատմություն.
Սիրտ, ինչպես է, որ չես պայթում:

Հ.Սահյան, 4-10-60, Երևան

Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ձեռագրատան վարիչ Գոհար Ազնավուրյանը հոբելյանական տոնակատարության օրերին խնդրեց ինձ ծանոթացնել իրեն՝ Չարենցի անտիպ ձեռագրերին: Իր ազնիվ գործին անմնացորդ նվիրված այդ կինը՝ Գոհար Ազնավուրյանը այնուհետև մի շարք հանդիպումների ժամանակ ցուցաբերել է, կասեի, մայրական խնամք, ջերմեռանդ մտահոգություն և գործարար վերաբերմունք ձեռագրերի բախտի, հանձնման ու պետականորեն պահպանելու հարցերին:

1969 թվականի աշնանը Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Նվարդ Բաղդասարյանը ցանկություն հայտնեց հնարավորություն ընձեռել նկարահանելու չարենցյան ձեռագրերը՝ տուն-թանգարանում ցուցադրելու համար: Նկարահանումները տևեցին մոտ մեկ ամիս (լուսանկարիչ Բ. Մավիսակալյան) և ձեռագրերի լուսանկարները այժմ գտնվում են Չարենցի տուն-թանգարանում:

Վերջապես 1969 թվականի դեկտեմբերի 23-ին Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, պաշտոնական մթնոլորտում, կատարվեց Չարենցի ձեռագրերի հանձնման արարողությունը՝ մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչների մասնակցությամբ, ներկա էր և Չարենցի կրտսեր դուստրը՝ Անահիտը:

Անկեղծ ասած, իհարկե ինձ համար շատ դժվար էր բաժանվել այդ ձեռագրերից, որովհետև դրանք ուղեկցել են ինձ իմ ողջ գիտակցական կյանքում և, լինելով կյանքիս ուղեկիցը՝ դարձել էին կարծես և կյանքիս բովանդակությունը: Հիմա, հանձնած լինելով այն թանգարան՝ կարծես զրկվել եմ նաև կյանքիս ուրույն բովանդակությունից, որն աշխատում եմ համալրել իմ արվեստով: Ավարտելով մասնագիտական կրթությունս Երևանի Գեղարվեստի ինստիտուտում՝ ես տարիներ շարունակ անդրադարձել եմ չարենցյան թեմային: 1967 թվականին Չարենցի 70-ամյա հոբելյանի օրերին բացված իմ անհատական ցուցահանդեսում նրան եմ նվիրել մոտ 25 յուղաներկ ու գրաֆիկ գործեր:

Ներկայացված 50 աշխատանքներից՝ այդ 25 կտավ կազմող Չարենցաշարը, որպես տարիների պրպտումների արդյունք, նպատակ ունի բացահայտել իր բնույթով եզակի մեծ բանաստեղծի կերպարը, պատկերել նրա միջավայրը և տալ նրա որոշ ստեղծագործությունների գեղանկարչական մեկնաբանումը:

Իմ ամբողջ կյանքում, առավելն ստեղծագործության ասպարեզում, Չարենցը մշտապես հանդիսացել է ներշնչման ու ոգևորության անսպառ աղբյուր: Չարենցյան ռոմանտիկայի ու

խորհրդանշական մտապատկերների հախուռն ոգևորությամբ ես ցանկություն եմ ունեցել պատկերել մարդկային ազատության ձգտման դարավոր երազանքների խենթ սլացքը, տիեզերքի անհունը նվաճել ցանկացող նույն այդ մարդու առնական ու հզոր կամքը, հասցնելով այդ ամենը հաղթական մարդու մոլեռանդ օրհներգության:

Չգիտեմ, ինձ որքան է հաջողվել թափանցել վիթխարի Չարենցի ստեղծագործության և անձնավորության անհուն խորքերը և կտավել այն, ստեղծել կտավներ Չարենցի մոտիվներով, բայց ես դա արել եմ սիրով, հավատով և, որ ամենակարևորն է, պարտքի զգացումով: Այս առիթով հարմար եմ տեսնում կրկնել հայտնի ասույթը. « Ես արի այն, ամենը, ինչ կարող էի, մյուսները թող անեն այն, ինչի ընդունակ են»:

Այժմ էլ ինձ հանգիստ չի տալիս Չարենցյան թեմայի նորովի բացահայտումը, Չարենցյան գաղափարների ու խոհերի համամարդկային արժեքները ներկայացնելը, նրա՝ կյանքի ու մահվան խոր փիլիսոփայության գեղանկարչական մեկնաբանումը: Եվ ես իմ ուժերի չափով ցանկանում եմ մարմնավորել այն հետագա ստեղծագործություններում:

Շարունակեմ խոսքս, ասեմ.

Իմ կյանքում եղել են թերևս միայն մի քանի նվիրական, կասեի հոգեցունց պահեր (կատարում եմ տարեթվային հուշագրական խախտում, հանուն հուշերիս բուն բովանդակության ընդգծման).

1. 1983-ին ականատեսը եղա Չարենցի 1936-37 թվականներն ամփոփող անտիպ ձեռագրերից կազմված հատորի լույսընծայմանը, որոնց պահպանումը Չարենցի հանձնարարականով ինձ էր վստահված:

2. 1975-ին մասնակցը եղա Չարենցի տուն-թանգարանի պաշտոնական բացման: Կասեմ միայն, որ այն տունը, որտեղ ապրել է մեծ բանաստեղծը իր ընտանիքով, այն տունը, որի ամեն անկյունը իմ մեջ արթնացնում է ջերմ, երջանիկ և միաժամանակ սրտաճմլիկ հիշողություններ, ինձ համար եղել է, կա և կմնա ընդմիշտ՝ սրբավայր:

3. Չարենցի մասին իմ հուշագրության մեջ հրամայական պահանջ էր զգացվում նյութը վավերացնող փաստերի:

Եվ ես՝

1987 թ. սեպտեմբերին դիմում ուղարկեցի Հայաստանի Պետական անվտանգության կոմիտեի նախարար Մ. Յուզբաշյանին, որում խնդրում էի՝ իրենց հիմնարկում պահվող Չարենցի արխիվից տալ ինձ որոշ փաստաթղթերի պատճեններ կամ տեղեկանք, հանուն շարադրանքիս ճշմարտացիության:

1989 թ. նոյեմբերին հնչեց հեռախոսազանգ Հայաստանի Պետական անվտանգության կոմիտեի հատուկ բաժնից. մի աշխատակցի ձեռքով մեր տուն բերվեց փաստաթղթի պատճենը և տեղեկանք, որով հայտնում էին, որ Պետական անվտանգության կոմիտեի աշխատակիցների տևական ու մանրագին որոնումներից հետո գտնվել է մի փաստաթուղթ՝ Հայկական ՍՍՀ ներքին գործոց նախարարության երկու աշխատակիցների և իմ՝ Ռեգինա Ղազարյանի ստորագրությամբ, որը հավաստում է, որ Չարենցի երեխաներին պատկանող ցուցակում նշված իրերը՝ 1937 թվին ինձ են հանձնվել, երեխաներին իմ խնամքի տակ թողնելու առիթով: Փաստաթղթի պատճենը տեղեկանքի հետ մեկտեղ այժմ պահվում է Չարենցի տուն-թանգարանում:

Որպես վերջաբան կրկնեմ.


Այսօր արդեն ձեռագրերը պետական հսկողության տակ են. և հենց այսօր դրանք շոռայլորեն իրենց ծառայությունն են մատուցում մասնագետներին: Իրենց խոցուկված և տեղ-

տեղ փոշիացած վիճակում անգամ, այդ ձեռագրերը դեռ լայն ասպարեզ դուրս չեկած, առաջինը ձեռք պարզեցին հենց իրեն՝ պոետի կրտսեր դուստր Անահիտին՝ տալով նրան կյանքի ուղեգիր: Գրվեցին, գրվում են և դեռ կգրվեն հատորներ: Պահպանված ամենավերջին փոշեհատիկն իսկ, իր կենսունակությամբ հոմերոսյան սեղանի փշրանք դարձած, կարող է վերաճել հաստափոր ուսումնասիրության և նոր լույս սփռել բազում հարցերի վրա ու հանդիսանալ մանրակրկիտ ուսումնասիրության առարկա՝ ներկա ու գալիք սերունդների համար: Չափազանցություն չի լինի ասել, որ արյունագիր այդ պատատիկներից յուրաքանչյուրը ունի դարակազիկ նշանակությունն կարոտ է հզոր գրչի և գիտական ընդհանրացումների մեծ թափի:

ՀՈԳՈՒՄ ՊԱՐՏՔԸ ԿԱՏԱՐԱԾ ԼԻՆԵԼՈՎ՝ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՄՆՈՒՄ ԱՍԵԼ ԻՆՁ ՀԻՄԱ, ԲԱՅՑ ԵԹԵ ՄԻԱՅՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼ ԻՄ ԽՈՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՆԱՐՀ ՀԱՐԳԱՆՔԸ ՉԱՐԵՆՑԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ՝ ՆՐԱ ՄԵԾ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

13/3-84 թ. (1982-1994 թթ.)

Երևան



Ռ. Ղազարյան «Եռանկար», կտ., յուղ., 1994 թ.:

1.— «Զառանցանք»:

Այս Էջերը համար, առ առջև Գ. Գրիգորյանի
և Գրիգորյանի Գրքերը և Գրքերը...
Իսկ այս Գրքերը - Գրքերը և Գրքերը
Եվ Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Եվ Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...
Գրքերը և Գրքերը և Գրքերը...

Գրքերը

Հարեցի փրկված ձեռագրերից



Ռեգինա Ղազարյանը և Չարենցի չկայացած հարսնացուն՝ Էռա Շմիդտը,


1980 թ.:

2

Կորս և անպատեհ անարար զանգուշ
 Արտոն զանգուշն և թեւակայն -
 Յորտ զոր զտեսն անարարն - սեպ
 Գրեմա զանգուշն զմի ինչ կանայն -
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար

Անպատեհ զանգուշն անարար
 Եւ զանգուշն անարար անարար -
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար
 Ինչպէս զանգուշն անարար անարար

Չարեանցի փրկված ձեռագրերից



Իզաբելլա Չարենց, 1932 թ. :



Եղիշե Չարեհց, 1929 թ.:



**Ն. Չարենցի ձեռագրերի հանձնումը Ն. Չարենցի անվան գրականության
և արվեստի թանգարանին, 1969 թ.:**



2.— «Դեպի հավերժություն»